ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

1.Ո՞ր տարբերակն է ճիշտ.
Հայերենն ունի
1. երեսունվեց բաղաձայն հնչյուն
2. քսանյոթ բաղաձայն հնչյուն
3. ութ ձայնավոր հնչյուն
4. քսանինը բաղաձայն հնչյուն

2.Ո՞ր շարքի բոլոր բառերն ենսկսվում բաղաձայն հնչյունով.
1. թթվածին, որովայն, մակբայ, ելակ
2. որթատունկ, շահույթ, վարդ, ով
3. կապույտ, ընչացք, բացիկ, հաճույք
4. Երևան, գահույք, իղձ, մաղթանք

3.Ո՞ր տարբերակում է տառի կամ տառակապակցության թվային արժեքը սխալ նշված
1. ԼԴ - 34
2. ՄՀԶ - 276
3. ՍԹ - 2009
4. ԱԸԴ - 184

4. Ո՞ր բառում է տառերի և հնչյունների քանակը հավասար.
1. աջառրս
2. կտակարան
3. հոգեվարք
4. երազ

5. Ո՞ր բառում գաղտնավանկ կա.
1. խաղընկեր
2. համրանալ
3. հյուսնություն
4. դյուցազն

6.Ո՞ր բառի վերջին վանկը չի շեշտվում.
1. բանաստեղծական
2. փոստարկղ
3. քիչ - քիչ
4. շրխկոց

7.Ո՞ր բառում <u>ու</u> *ձայնավորի հնչյունափոխություն չկա.*
1. անվանացանկ
2. ըմպանակ
3. ընչասեր
4. նշաձև

8.Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում ռ.
1. հողմակ…ծ, հ…գուդ, ան…թի, երկվ...ոյակ
2. հ..դս ցնդել, հանապազ…ոյա, վաղ…ոդյան, օրըստ…ոե
3. աման…ոյա, բար…ոություն, գիշեր…թիկ, մեղմ…ոեն
4. հ...տնկայս, վաղ...ոդայն, ան...ոոք, ջր...ոինեք

9.Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում ը.
1. նոր…նտիր, երկ…նտրանք, լուս…նկա, վեր…նձյուղվել
2. գործ…նկեր, ակ…նկալել, փոխ…մբռնում, սր…նթաց
3. ան…նչացք, հոտ…նկայս, ակ…նհայտ, ճեպ…նթաց
4. ան…նդհատ, առ…նթեր, հյուր…նկալ, խոչ…նդոտ

10.Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում ք.
1. թաղ...ել, ի...ամոլ, ճի...ուջանք, վար...ուբար…
2.արևայրու…, ծե…ծե...ուն, տրտմաշու..., քաշկռտու...
3. ար...ահատանք, դիցու…,երախայրի…, ապա…ինվել
4. վար…աբեկել, վար…ագիծ, վար…ել, դրասան…

11. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում խ.
1. զե...չել, խրա...ճանք, ու...տափուշ, փարսա…
2. ու...տատեղի, Սանդու...տ, ջա...ջա…ել, վաշ...առու
3. ա...տազերծել, Ա...թամար/ կղզի /, խա...տել, դժո...ք
4. դշ...ոյական, փ...ձկալ, դժ...եմ, ատա…ձ

12. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում եվ.
1. ագ...որ, գին...աճառ, տար...երջ, հոգ…իճակ
2.կար...եր, դափն...արդ, գեր...արել, ոսկ...արս
3. ագ...ազ, գոտ…որել, հոգ...արք, ուղ...ճար
4.թեթ...ոտն, ս...ակնած, ոսկ...ազ, սեթ...եթել

13.Շարքերից քանիսու՞մ մեծատառի գրության սխալ կա.
1. Հաագայի միջազգային դատարան, Լեռնային Կիլիկիա, Հայ դատի հանձնախումբ, Երևանի Պետական համալսարան
2.Սահմանադրության օր, Հռոմեական կայսրություն, Փոքր Ասիա, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն
3.Թամանյան դիվիզիա, Էջմիածնի Մատենադարան, Սողոմոն Իմաստուն, Ազգային ժողով
4.Արտաշես Ա Բարի, Լյուդվիգ վան Բեթհովեն, Համաշխարհային առաջին պատերազմ, Հայկական բարձրավանդակ

1. երեքում
2. երկուսում
3. մեկում
4. բոլորում

14.Ո՞ր շարքում են բոլոր բառերի բաղադրիչները գրվում անջատ.
1. գիր / գրականություն/, թել /պանիր/, ոտքից / գլուխ/, հինգ / ութերորդ /
2.տիկնանց / տիկին/, կողք / կողքի/, ֆրանս / գերմանական/, ամեն / ոք/
3. մուգ / կարմիր/, արքայից / արքա /, ներս/ քաշել/, դեմ / դիմաց/
4.դեր / ծովակալ/, իբրև / թե/, ի /նշան/, երեքից / չորս/

15.Քանի՞ բառում և բառաձևում շեշտը չի դրվում վերջին ձայնավորի վրա.
Անզուգական, գիրքդ, լուսաստղ, թրխկալ, իհարկե, հենց որ, ընդհանուր, շունչ առնել, Պուշկինի:
1. հինգում
2. չորսում
3. երեքում
4. վեցում

16.Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա.
1. Վաղ գարնանը սկսեցին այգեբացի աշխատանքները:
2. Ինչու՞ պիտի հայրդ մեղանչի քո գործած չարիքի համար:
3. Հանձին նոր ընկերոջ նա լավ խորհրդատուի է հանդիպել:
4. Հայ ժողովուրդը մշտապես բարյացակամ վերաբերմունք է դրսևորել օտարի հանդեպ:

17.Ո՞ր շարքում տրված բառերը հոմանիշ չեն.
1. փափկակյաց – մեղկ - ապաշնորհ
2. քաջատեղյակ – ներհուն - գիտակ
3. վավերացնել – հավաստել– հաստատել
4. անոսր – նուրբ - բարակ

18.Ի՞նչ է նշանակում <u>աշտանակ</u> բառը.
1. հեծյալ
2.աստիճան
3. ճրագակալ
4.խմիչք

19.Ո՞ր բառի աջ կողմում տրված է նրա ոչ թե փոխաբերական, այլ ուղիղ իմաստը.
1. լուռ - անբարբառ
2.դառը - անհրապույր
3. քար - անտարբեր
4.գորշ - անհյուրընկալ

20.Նշված դարձվածքներից ո՞րը չի կարող գործածվել իբրև սովորական բառակապակցություն.
1. գլխատակին փափուկ բարձ դնել
2. ափերից դուրս գալ
3. հին երգը երգել
4. հաշվի նստել

21. Ո՞ր բառը ունի համանուն.
1. ծաղիկ
2. բարակ
3. մեջք
4. դեմք

22.Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր.
1. երկարամյա, կենսաթրթիռ, դրամատնային, վարչապետ
2. քաղցրահնչյուն, եռոտանի, հոգաբարձու, աստվածհաճո
3. արյունարբու, մարգարտահուռ, լվացքատուն, հնգամյա
4. ակնածանք, իննսունինը, ստորադասական, ինքնուսույց

23.Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակին է կազմվում – ներ վերջավորությամբ.
1. լրաբեր, վավերագիր, ձուկ, քարտաշ, գազամուղ
2. սեպագիր, ածխահատ, ռուս, արկղ, նուռ
3. հայագետ, մատենագիր, մեծատուն, կողակից, դասալիք
4. խորագիր, սպա, կայսր, որմնադիր, բեռնատար

24.Փակագծերում տրված ո՞ր բառը նախադասության մեջ պետք է տեղադրել բացառական հոլովով.
1. Ե՛վ գյուղում, և՛ բերդի / գլուխ / ժամանակը սահում է դանդաղ:
2. Սև տառերը պողպատի / սառնություն / պատմում էին հերոսի մասին:
3. Լուսանում է. լեռան / հետև / ելնում է արևը:
4. Հնձվորը գոտուց մանգաղը հանեց, շպրտեց մի / անկյուն/:

25.Ո՞ր շարքի հոլովական բոլոր ձևերն են ճիշտ.
1. սկեսուրի, անվան, հուսո, դռից
2. Պագանինիի, ցասումի, մահվան, Սոչիի
3. աղջկա, ամառի, նախամարդու, սգո
4. օրվա, Հակոբենց, ամուսնու, Նելլու

26.Ո՞ր շարքի բոլոր ածականներից է հնարավոր գերադրական աստիճան կազմել.
1. խոր, դիպուկ, քնքուշ, կույր
2. երկար, քաջ, տխուր, սառը
3. հաստ, նեղ, կարճ, բոբիկ
4. շագանակագույն, լավ, ծանր, խաղաղ

27.Ընդգծված դերանունների գործածության ո՞ր ձևն է սխալ / ոչ գրական /.
1. <u>Ի՞նչ</u> կլինի, որ դուք էլ մի քիչ օգնեք նրան:
2. Ճշտե՛ք՝ <u>ինչումն</u> է բանը, որ այսքան ձգձգվում են մեր գործերը:
3. <u>Ի՞նչ</u> հրաշալի տեսարան է բացվում այս բարձունքից:
4. <u>Ի՞նչ</u> հարկ կա այդքան աղմուկ բարձրացնելու:

28.Տրված բառաձևերից քանի՞սն են անցյալ կատարյալ ժամանակաձև:
Կանչեցին, բազմում է, չի հրաժարվել, կգերադասեր, գործել է, պիտի մեկնի, առան, չկորչեք, չընդմիջեցինք, հարցրի:
1. չորսը
2. երեքը
3. երկուսը
4. հինգը

29.Ո՞ր շարքի բոլոր բառերն են կրավորական սեռի.
1. լուծարվել, խցկվել, գգվել, խոսվել
2.հիասթափվել, ընկճվել, չարչարվել, շփոթվել
3. գամվել, դրվել, ընդհատվել, ալեկոծվել
4. ախտահանվել, խելագարվել,տարածվել, աղացվել

30.Ո՞ր շարքի բոլոր վերաբերականներն են արտահայտում հաստատում.
1. անպայման, անշուշտ, բարեբախտաբար
2.անգամ, արդարև, միայն թե
3. հարկավ, իրավ, անկասկած
4. արդյոք, կարծեմ, գուցե

31.Ո՞ր նախադասության մեջ է որը ստորադասական շաղկապ.
1. Կինը, որ անհամբերությունից հետ ու առաջ էր քայլում, լարեց լսողությունը:
2. Սպասեցինք, մինչև որ անձրևը դադարեց:
3. Փնտրում եմ, բայց չեմ գտնում, թե որ գրքում է քո ասած բանաստեղծությունը:
4. Սարսափով նկատեց, որ գետի ջուրը կարմրում է:

32. Քանի՞սն են համառոտ նախադասություն .
ա/ Նա երես առած տղա է:
բ/ Հրեն է՞ մեր գյուղը:
գ/ Թիկն տուր բարձին, սիրելի՛ս:
դ/ Դե՛, ինչ խոսք, հոգնել ենք իսպառ:

1. բոլորը
2. երկուսը
3. մեկը
4. ոչ մեկը

33.Ընդգծվածներից քանի՞սն են ենթակա.
Արճճե կարկուտը ծեծում էր քարերն ու քարափները:
Հոգնած էր մարդը. ամբողջ օրը հնձել էր կարճ ցողունով կորեկ, և մեջքը ցավում էր:
Մայրը նայեց տղային, հրդեհվեց դեմքը, հայրը տեսավ կնոջ դեմքի կարմիրը:
Նրա ամբողջ հարստությունը ծոցի հաստ տետրն էր և սրածայր մատիտը:
1. չորսը
2 . երեքը
3 . երկուսը
4. բոլորը

34.Ո՞ր նախադասության մեջ խնդրառական սխալ կա.

1. Այսպիսի պայմաններում չենք կարող խթանել ո՛չ գրավոր, ո՛չ բանավոր խոսքի զարգացումը:
2. Ինչպե՞ս է եղել, որ չես սիրահարվել այդ հրաշալի օրիորդի վրա:
3. Անկասկած, դրսում ուժեր կան, որ ուզում են խոչընդոտել մեր առաջընթացը:
4. Փորձագետը ծանոթացավ բոլոր հանգամանքներին վերջնական վճիռ կայացնելուց առաջ:

35.Նախադասություններից քանիսի՞ մեջ համաձայնության սխալ չկա.

ա/ Այդ պայմանագիրը կսերտացնի երկու երկրների միջև արդեն իսկ առկա ռազմական, քաղաքական կապերը:
բ/ Նրան թվաց, թե իրենց տանից տանում են ոչ թե մի ձի, այլ իր եղբորը:
գ/ Մերկ ծառերի արանքից երևում է քաղաքը, կարմիր տանիքներով տները:
դ/ Սաբուում ամեն առավոտ՝ արևածագին, բնակիչները սոսիների տակ արևին ծունր էին դնում:
1. երեքում
2. երկուսում
3 . մեկում
4 . բոլորում

36.Ո՞ր նախադասության մեջ շարադասական սխալ կա.

1. Նա ուշադիր զբոսնող երիտասարդներին էր նայում:

2. Հեռուստատեսային վերլուծական հաղորդումների,ասուլիսների, հարցազրույցների մի ամբողջ շարք հաջորդեց այդ իրադարձություններին:

3. Հազարավոր մարդիկ այդ սրբավայրում իրենց աղոթքները աստծուն հղելու էին հավաքվել:

4. Հին ընկերոջ պահվածքից այնպես էր ցնցվել, որ չասաց մի բառ անգամ:

37.Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզ նախադասության.

Այդ ոգին պիտի բարձրանար ու ջարդեր, հետ շպրտեր թալեաթների ու էնվերների հետևորդներին, որ գալիս էին ջնջելու նաև արևելահայությանը:

1. Այդ ոգին պիտի բարձրանար ու ջարդեր հետ շպրտեր թալեաթների ու էնվերների՝ նաև արևելահայությանը ջնջելու եկող հետևորդներին:

2. Այդ ոգին պիտի բարձրանար ու ջարդեր, հետ շպրտեր նաև արևելահայությանը ջնջելու եկող թալեաթների ու էնվերների հետևորդներին:

3. Այդ ոգին պիտի բարձրանար ու ջարդեր, հետ շպրտեր թալեաթների ու էնվերների հետևորդներին նաև արևելահայությանը ջնջելու եկող:

4. Այդ ոգին պիտի բարձրանար ու ջարդեր, հետ շպրտեր նաև արևելահայությանը ջնջելու եկած թալեաթների ու էնվերների հետևորդներին:

38.Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ.

- Սիրելի՛ս, դու քո ճամփա՛ն շարունակիր, թող՝ ես էլ իմ գործը անեմ,- առանց գլուխը բարձրացնելու ասաց գյուղացին անցորդին:

1. Գյուղացին ասաց անցորդին, որ նա իր ճամփան շարունակի և թողնի՝ ինքն էլ իր գործը անի:

2. Գյուղացին ասաց անցորդին, որ նա իր ճամփան շարունակի և թողի, որ ինքն էլ իր գործը անի:

3. Գյուղացին ասաց սիրելի անցորդին, որ նա իր ճամփան շարունակի և թողի՝ ինքն էլ իր գործը անի:

4. Գյուղացին ասաց անցորդին, որ նա իր ճամփան շարունակի և թողնի՝ նա էլ իր գործը անի:

39.Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա.

1. Մեղմօրոր սյուքը, թվում էր, շոյում է նկարչի՝ հրաշքներ գործած ձեռքերը, համբուրում, փաղաքշում, իսկ ծովն ասես խոնարհվում էր, երկրպագում:

2. Եվ այն, ինչ հայտնեց աղջկա ծնողներին, ընդունվեց՝ իբրև մարգարեի խոսք. աղջիկը պիտի քաղցրացներ նրա դառը ծերությունը:

3. Մի պարզկա գիշեր Արաքսի՝ գաճաճ թփուտներով ծածկված ափին երևաց մոլլան՝ հինավուրց աղանդի՝ արևորդիների մարգարեն՝ սմքած, փտած մի ծերուկ՝ ոտքից գլուխ հագած կանաչ:

4. Բայց այս ի՞նչ է. ինչ –որ ուժգնացող խշշյուն է լսվում, ու հանկարծ մակույկը քշվում է՝ սրընթաց գահավիժելով ներքև՝ պաղպաջուն ջրերի խորքը:

40.Ո՞ր նախադասության մեջ շեշտ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն).

1. Այնտեղ խորը կիրճում տես ինչպես է մոլեգնում գետը զարկվում ժեռ ափերին:

2. Մի վախենա իմ դշխուհի որովհետև երբ սիրում եմ աշխարհի ամենահեզ ամենաբարի ոգին եմ դառնում:

3. Ոչ մի ծիլ ոչ մի թուփ չէր փրկվել տարերքի ամենազոր թափից ամեն ինչ քանդվել ավերվել էր:

4.Աշնանային անդորր կեսօրվա այդ ժամին քաղցր էր և սիմինդրի տերևների խշշոցը և ծղրիդների միալար երգը:

41.Պարբերությունները նշող թվերի ո՞ր դասավորությունն է համապատասխանում շարադրանքի / տեքստի/ քերականական և տրամաբանական ճիշտ կառուցվածքին.

1.Բավականին ժամանակ անցավ, մինչև եպիսկոպոսը երևաց լճափին լրիվ զգեստավորմամբ,պերճափայլ շքախմբով:Ձեռքերը տարածեց, կարդաց համապատասխան աղոթքներ ու անիծեց օձաձկներին:

2.Այդ ժամանակ բնակիչները դիմեցին Լոզանի եպիսկոպոսին:Վերջինս երկար տատանվեց,սակայն ի վերջո տեղի տվեց համառ խնդրանքներին և համաձայնեց օգնել մարդկանց:

3.XVll դարում Ժենևի լճում հայտնվեցին հսկայական քանակությամբ օձաձկներ: Դրանք այնպես կեղտոտեցին լիճը, որ մոտակա քաղաքների ու գյուղերի բնակիչները շուտով կարող էին մնալ առանց խմելու ջրի:

4.Իսկ որոշ ժամանակ անց մարդիկ նկատեցին, որ լճի մակերևույթին սկսել են սատկած օձաձկներ երևալ: Նրանք համոզված էին, որ անեծքն ազդել է. օձաձկները ոչնչանում են:

1/ 3,2,4,1 3/ 3,4,2,1

2/ 3,2,1,4 4/ 3,4,1,2

42.Տրված հատվածներից յուրաքանչյուրը շարադրված է հայոց լեզվի՝ ստորև նշված տարբերակներից որևէ մեկով: Ո՞ր պատասխանն է ճիշտ.

Ա.« Թէպէտ և եմք ածու փոքր և թույով յոյժ ընդ փոքու սահմանեալ և զօրութեամբ տկար և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս և արժանի գրոյ յիշատակի»:

Բ.«Երբ կու ծաղկին միտքս ու հոգիս, լեզուս իմ հանց պըտուղ կուտայ»:

Գ. « Պզտիկ տապանին քով չոքած երկար- բարակ ու ցածր ձայնով կը խոսեր իր զավակի հետ, անոր մանուկի բարբառով»:

Դ.« Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին»:

1. արևմտահայերեն 1/ Ա-3, Բ-1, Գ-4, Դ-2

2. արևելահայերեն 2/ Ա-1, Բ-2, Գ-4, Դ-3

3. գրաբար 3/ Ա-2, Բ-4, Գ-3,Դ-2

4. միջին հայերեն 4/ Ա-3, Բ-4, Գ-1, Դ-2

43. Էպոսների համապատասխանության ո՞ր տարբերակն է ճիշտ.

Ա. ֆրանսիական 1. «Սասունցի Դավիթ»
Բ. ռուսական 2. « Ասք Իգորի արշավանքի մասին»
Գ. հայկական 3. «Ռոլանդի երգը»
Դ. պարսկական 4. «Շահնամե»

1. Ա-4, Բ-1, Գ-3, Դ-2
2. Ա-3, Բ-2, Գ-1, Դ-4
3. Ա-2, Բ-1, Գ-3, Դ-4
4. Ա-1, Բ-3, Գ-4, Դ-2

44. Ո՞վ է տողերի հեղինակը. « ... տասը լեզու սովորեցե՛ք, բայց ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցե՛ք»

1. Ավ. Իսահակյան
2. Ալ. Շիրվանզադե
3. Գր. Զոհրապ
4. Խ. Աբովյան

45.Ո՞վ է բանաստեղծության հեղինակը.

Մեր լեզուն մեր խիղճն է դա,
Սուրբ հացը մեր սեղանի...

1. Վ. Տերյան
2. Հ. Սահյան
3. Հովհ. Շիրազ
4. Պ. Սևակ

46. Ո՞ր գրական ուղղություն չէ.

1. ռոմանտիզմ
2. կլասիցիզմ
3. մարքսիզմ
4. ռեալիզմ

47.Ո՞վ է ասույթի հեղինակը.

«Թեև մենք փոքր ածու ենք և թվով շատ սահմանափակ, ու զորությամբ թույլ և շատ անգամ օտար թագավորների կողմից նվաճված, բայց և այնպես մեր երկրում էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել»

1. Ղազար Փարպեցի
2. Ագաթանգեղոս
3. Եղիշե
4. Մովսես Խորենացի

48.Ո՞րը պատմավեպ չէ.

1. «Գևորգ Մարզպետունի»

2. «Վարդանանք»

3. «Քառս»

4. «Պապ թագավոր»

49.Նշվածներից քանի՞սն են երգիծանքի ժանրային ձևեր.

Կատակերգություն, բալլադ, վոդևիլ, պարոդիա, էպիգրամ, առակ, ֆելիետոն, վիպերգ:

1. վեցը

2.հինգը

3. չորսը

4.յոթը

50.Ձախ կողմում նշված գրական կեղծանուններից յուրաքանչյուրը համապատասխանում է աջ կողմում նշված ազգանուններից որևէ մեկին. ո՞ր պատասխանն է ճիշտ.

Ա. Եղիշե Չարենց	1.Մովսիսյան	1. Ա-5, Բ-4, Գ-1, Դ-3, Ե-2
Բ. Միսաք Մեծարենց	2. Չպուգքյարյան	2. Ա-5, Բ-4, Գ-3, Դ-1, Ե-2
Գ. Հովհաննես Շիրազ	3. Կարապետյան	3. Ա-3, Բ-4, Գ-5, Դ-1, Ե-2
Դ. Ալեքսանդր Շիրվանզադե	4. Մեծատուրյան	4. Ա-1, Բ-4, Գ-3, Դ-5, Ե-2
Ե. Դանիել Վարուժան	5. Սողոմոնյան	

51.Ո՞վ է «Հայերեն արմատական բառարան»-ի հեղինակը.

1. Է. Աղայան
2. Գ. Ջահուկյան
3. Հ. Աճառյան
4. Ա. Սուքիասյան

52.Ո՞ր շարքի բոլոր բառերն են հապավում.

1. ջրաման, վիպերգ, աէկ, բուհ
2 . ընձուղտ, նշաձև, սոցապ, զազս
3 . գրագիր, դասվար, թոքախտ, գես
4 . ՀՀ, ժողկրթբաժին, դասղեկ, հէկ

53. Ո՞ր բառի ստուգաբանությունն է սխալ

1. Էջմիածին – էջ(իջնել)+մի(միակ)+ա+ծին(ծնունդ)

2. ամանոր – ամ (տարի)+ա+նոր

3. աստանդակն - աստ(այստեղ)+անդ(այնտեղ)+ակն

4. հուղարկավորություն - հուղ(հող)+արկ(գցել)+ավոր+ություն

54.Համարակալված բառերում բաց թողած տառերը կամ տառակապակցությունները պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված.

Ընտան…կան /1 / անդորրը խախտվել էր: Վերցնելով կնոջը՝ **Սոֆ…յին** / 2 /, ու աղջկան՝ տեր Սահակը, ինչպես բույնը կորցրած թռչուն, անցավ լեռից լեռ, քարանձավից քարանձավ և ահը աչքերի մեջ՝ մի **պար..կա** / 3 / օր՝ **ճրագալույ..ին** /4 /, հասավ ինչ –որ սարահարթ՝ **սրաշեղ…** / 5 / սրերի նման ժայռաբեկորներով, պղտոր գետերով. չէին երևում այն **ականակի…** / 6 / առվակները, որ **թավ…գլոր** /7 / իջնում էին հայրենի լեռների գագաթներից, **փ…ող** / 8 / այգեստանները, որ ուշ աշնան բարեբեր արևի **պար…ներով** / 9/ ժպտում էին հողի մշակին, խոյակազարդ **մույ…երով** / 10/ շինությունները, որ հիացմունք էին պարգևում դիտողին:

1. 1- **ե**, 2- **յա**, 3 - **զ**, 4-**ց**, 5 -**բ**, 6 –**տ**, 7 -**ալ**, 8-**թթ**, 9-**գ**, 10-**թ**
2. 1 -**եա, 2 –յա**, 3-**զ**, 4- **ց**, 5 - **բ**, 6- **տ**, 7- **ա**, 8 – **թթ**, 9- **գ** 10-**կ**
3. 1- **եա**, 2 –**յա**, 3- **զ**, 4 –**ց**, 5-**ջ**, 6- **ր**, 7- **ալ**, 8- **թթ**, 9- **թ**, 10 –**թ**
4. 1- **ե**, 2 – **իա**, 3- **զ**, 4-**ց**, 5 – **բ**, 6 – **տ**, 7-**ալ**, 8- **թթ**, 9-**գ**, 10- **կ**

55.Ո՞ր շարքում բառակապակցության իմաստի սխալ բացատրություն կա.

1. մատռվակ – խմիչք մատուցող սպասավոր, նավակատիք – տոն՝ հաստատության բացման առիթով, նշխար – օրհնած հաց

2.դրասանգ - թարմ ոստերից, ծաղիկներից հյուսված պսակ, բարձրուղեշ - բարձր ճյուղեր ունեցող, մակաղել – ոչխարների հոտի խմբվելը

3. ըմբոշխնել – հաճույքով ճաշակել, բազրիք - աստիճանների ճաղաշարի վրա դրվող փայտ, անթացուպ – թևատակի գավազան

4. Հրովարտակ – թագավորի գրավոր դիմումը ժողովրդին, խարամ - արտադրության ընթացքում առաջացած ավելորդ նյութեր, նկանակ – նկարները տեղադրելու շրջանակ

56.Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ.

1. գլուխ բերել - հաջողացնել
2. լույս սփռել - բացահայտել
3. աչք տնկել - սպասել
4. գլուխը կորցնել – կտրել

57.Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հոմանիշ.

1. գեթ – լոկ, հանուր - ամբողջ, վիհ – խորխորատ, գաղջ -գոլ
2. ժուժկալ- սակավապետ, ծառա - աղախին, բորբ - կիզիչ, ումպ – ըմպանակ
3. հեգ- անհոգ, խեթ – խոժոռ, զարմ – տոհմ, ակութ – օջախ
4. գծուծ – մանրախնդիր, ասվյա - բրդե, ներհակ – ներուժ, տոկուն - դիմացկուն

58.Ո՞ր շարքի բոլոր արտահայտություններն են դարձվածքներ.

1. սառույցը մաքրել, սիրտը բացել, սեղան գցել, սար ու ձոր ընկնել, պաս պահել
2 . քարը քարին չթողնել, ուժի մեջ լինել, վերջը տալ, խոտ հնձել
3 . քիթը ցցել, վրանը մտնել, քարը տրաքի, ուժից ընկնել
4 . ոտքի տակ տալ, շիլափլավ անել, նեղն ընկնել, մատի փաթաթան դառնալ

59.Ո՞ր շարքի բոլոր բառերի արմատներին ավելացնելով – ուհի վերջածանցը՝ կարելի է կազմել ածանցավոր բառեր /առանց երկրորդ ածանցի/.

1 . թագադիր, պչրասեր, հրեերեն
2. ինքնասեր, երգչախումբ, գործընկեր
3. սփյուռքահայ, բանվորական, պարագիծ
4. սպասարկում, գեղեցկատես, սերունդ

60.Ո՞ր շարքում կա բառ, որ սովորաբար հոգնակի թվով չի գործածվում.

1. տետր, վերնատուն, ընչացք
2. կին, ազգր, կամայականություն
3. երևանցի, տիկին, պարոն
4. նախնի, հոգևորականություն, քեռի

61.Ո՞ր նախադասության մեջ ստացական հոդի գործածություն կա.

1. Մտքումս օրհնում էի նրան:
2. Վերջերս մենք հանդիպեցինք:
3. Աշխարհումս ախ չեմ քաշի, քանի որ ջան ես ինձ համար…
4. Դիմորդներս այս անգամ լավ ենք պատրաստվել քննություններին:

62.Ընդգծվածներից ո՞րն է սահմանական եղանակի ներկա / անկատար / ժամանակաձև.

Այն, ինչի մասին <u>պատմում էի</u> / 1/, սովորական քամի չէ, այլ <u>սամում է</u> / 2 /: Նա <u>երդում է</u>/ 3/ կերել, որ ոչ մեկի հետ <u>չի հանդիպում</u> /4 /:

1. երրորդը
2.երկրորդը
3. առաջինը
4. չորրորդը

63.Նախադասություններից քանիսո՞ւմ շաղկապի գործածության սխալ կա.

ա/ Վարդան Մամիկոնյանը հայտարարում է, որ սատանան անգամ, եթե Հազկերտի թշնամին է, իր բարեկամն է:
բ/ Շատ էի ցանկանում, որպեսզի այդ օրը դաս պատասխանեի:
գ/ Պարզվեց, որ եթե մի քիչ էլ առաջ շարժվեինք, կհանդիպեինք տեղաբնակներին:
դ/ Պառկում էր չոր խոտերի վրա, թե ինչ է ջարդված ոսկորներին մի քիչ հանգստություն տար:

1. երեքում
2. երկուսում
3. մեկում
4. ոչ մեկում

64.Նախադասություններից քանիսո՞ւմ կապվող բառի հոլովական ձևի կամ կապի գործածության սխալ կա.

ա/ Նա արագ - արագ թերթում է մատյանները՝ փորձելով հապճեպ ծանոթանալ դրանց հետ:

բ/ Ինչո՞ւ համար է ճակատագիրը հաճախ անարդար լինում լավ մարդու վերաբերյալ:

գ/ Ջութակի վրա նվագելը նրա միակ զբաղմունքն էր:

դ/ Այդ ամբողջ գաղափարախոսությունը հիմնված է կեղծիքի վրա:

1. երեքում
2. երկուսում
3. մեկում
4. ոչ մեկում

65.Փակագծերում տրված բառերի՝ ձևափոխության և նախադասության մեջ տեղադրման ո՞ր տարբերակն է ճիշտ.

Կարեվեր … Էրոսը, … նայելով Ապոլոնին, ասաց.

– Քո նետերը, Ապոլո՛ն, ճիշտ է, անվրեպ են, բայց իմ նետը ևս պակաս…, դու շուտով… դա:

/1.զգալ, 2. վրդովել, 3. խոցել, 4.եմ/

1. խոցված, վրդովված, չէ, կզգաս
2. էր, վրդովված, խոցող, կզգաս
3. խոցվեց, վրդովվել, չի, պիտի զգաս
4. վրդովված, խոցված, չի, զգալու ես

66.Ո՞ր նախադասությունն է բարդ / նախադասությունները կետադրված չեն /.

1. Ծանր անցյալը թվում էր թանձր մշուշի մեջ կորած:
2. Ինձ թվում էր ես էլ եմ նրա հետ անցել այդ ճանապարհը:
3. Ոչ ոք չէր երևում ոչ բակում ոչ տան կողքով անցնող փողոցում:
4.Լեռան գագաթից իջնող առատահոս գետակները անցնելով ծաղկազարդ մարգագետիններով և ցորենի ծփուն արտերով ի վերջո հասնում էին լճին:

67. Ընդգծվածներից քանի՞սն են պարագա.

<u>Ամեն անգամ՝</u> հեռավոր <u>լեռներին</u> նայելիս, ծերունին հիշում էր այն օրերը,<u>երբ</u> ինքը <u>հայրենիքում</u> էր ապրում:

1. երեքը
2. երկուսը
3. մեկը
4. չորսը

68.Ո՞ր նախադասության մեջ ենթակա ստորադաս նախադասություն կա.

1. Այն, ինչ ինձ դուր չի գալիս, վճռականորեն մերժում եմ:

2. Իսկական բարեկամը նա է, ով քեզ ցույց է տալիս թերություններդ:

3. Մրցանակը կշահի նա, ով առաջինը տեղ կհասնի:

4. Եկել էին ընկերները, որոնք անկեղծորեն ուրախացել էին նրա հաջողությամբ:

69.Ո՞ր տարբերակը պետք է տեղադրել քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն ստանալու համար.

…….. , որի գնացքի անցնելուն դեռ երկու ժամ կար:

1 Նստարանին նստած միակ ուղևորն էր սպասում կառամատույցին.

2. Մի միայնակ ուղևոր էր նստած կառամատույցի նստարանին

3. Կառամատույցի նստարանին նստած էր միակ ուղևորը

4. Կառամատույցի նստարանին նստած միակ ուղևորը սպասում էր

70.Ո՞ր տարբերակում է պարզ նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդ ստորադասական նախադասության.

Մեր փողոցով իրիկնապահին անցնողը պապիս պիտի ասեր « բարի իրիկուն»:

1. Իրիկնապահին անցնում էին մեր փողոցով ու պապիս ասում « բարի իրիկուն»:

2. Երբ իրիկնապահին անցնում էին մեր փողոցով, պապիս ասում էին « բարի իրիկուն»:

3. Իրիկնապահին նա, ով անցնում էր մեր փողոցով, պապիս պիտի ասեր « բարի իրիկուն»:

4. Նա, ով իրիկնապահին անցնում էր մեր փողոցով, պապիս պիտի ասեր « բարի իրիկուն»:

71.Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ.

Վեհափառը հարցրեց, թե ինչ պիտի լինի իր գործը Դվինում, և տարակուսած ավելացրեց, որ իր համար անհասկանալի շատ բան կա այդ հապճեպ որոշման մեջ:

1. Վեհափառը հարցրեց.

- Ի՞նչ պիտի լինի նրա գործը Դվինում, - և տարակուսած ավելացրեց, - ինձ համար անհասկանալի շատ բան կա այդ հապճեպ որոշման մեջ:

2.- Ի՞նչ պիտի լինի իմ գործը Դվինում, - հարցրեց վեհափառը և տարակուսած ավելացրեց.- ինձ համար անհասկանալի շատ բան կա այդ հապճեպ որոշման մեջ:

3. Վեհափառը հարցրեց.

- Ի՞նչ պիտի լինի իմ գործը Դվինում, - և տարակուսած ավելացրեց, - ինձ համար անհասկանալի շատ բան կա այդ հապճեպ որոշման մեջ:

4. -Ի՞նչ պիտի լինի իմ գործը Դվինում, - հարցրեց վեհափառը և տարակուսած ավելացրեց.- իմ համար անհասկանալի շատ բան կա այդ հապճեպ որոշման մեջ:

72.Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա.

ա/ Մտքի գերագույն լարումով ճգնում էր գուշակել թշնամու՝ իր համար այս վայրկյանին անհայտ մտադրությունները. միաժամանակ հոգին այլ խոհեր էին կրծում. « Գազանին խոցել, ո՛չ սպանել, այո՛, խոցել կարեվեր»:

բ/ Թշնամու՝ պարսիկների կողմից գալիս էր խուլ հեղեղի ձայն՝ մե՛րթ հուժկու, մե՛րթ մարմրուն. հակառակորդի բանակը դավադրորեն կծկվում էր, ընդարձակվում՝ դասավորելով իր զորագնդերը՝ մատյան գունդը:

գ/ Միամտվելով, որ գիշերը չի սկսվի ճակատամարտը, Վարդանը հրամայեց հերթով քնել, իսկ արթուն զորագնդերին՝պատրաստ լինել ամեն անակնկալի:

դ/ Հոգեկան մեծ խռովքի մեջ ընկած՝ Վարդանը դարձյալ ու դարձյալ անդրադառնում էր սիրտը բզկտող մտքին՝ գազանին խոցելուն:

1. երեքում
2. երկուսում
3. մեկում
4. ոչ մեկում

73. Ո՞ր պնդումն է ճիշտ մեր այբուբենի բնութագրման համար.

ա/ ստեղծվել է մեկ հնչյունին մեկ տառ

բ/ զերծ է լրացուցիչ նշաններից

գ/ ունի ձայնավոր, կիսաձայն, բաղաձայն հնչյուններ

դ/ ունի աջահայաց գրություն

1. մեկը 2. երկուսը 3. երեքը 4. բոլորը

74.Նշված հատկանիշներից ո՞րը բնորոշ չէ գիտակ ոճին.

1. գրական - գրքային բառապաշարը
2. պատկերավորությունը
3. տրամաբանականությունը
4. շարահյուսական բարդ կառույցները

75.Պատկերավորման - արտահայտչական ի՞նչ միջոց է օգտագործված հետևյալ տողերում.

Արյուն կը ծորե չափազանց հասուն
Փոշոտ մորենին:

1. աստիճանավորում
2.հակադրություն
3. փոխաբերություն
4. հեգնանք

76. Ո՞ր լեզվաընտանիքին է պատկանում հայերենը .

1. անգլո-ֆիննական

2. հնդեվրոպական

3. չին-տիբեթական

4. հնդիրանական

77.Ո՞վ է խոսքի հեղինակը:

«Իբրև մոր նայել և իբրև մոր են պահել իրենց մայրենի լեզուն հայ ժողովրդի մայրասեր և մայրախնամ զավակները սկսած Մաշտոցից ու մեր առաջին թարգմանիչներից մինչև ... Վարուժան ու Չարենց»:

1. Վ. Սարոյան
2. Պ. Սևակ
3. Ավ. Իսահակյան
4. Լ. Շանթ

78. Ո՞ր ստեղծագործությունից է հատվածը:

« Ընդունի՛ր հյուսվածքն այս աղիողորմ հեծեծանքներիս,

Եվ այս բանական նվերն հոտոտիր»:

1. Ն. Շնորհալի – «Ողբ Եդեսիո»
2. Մ. Խորենացի – «Ողբ»
3. Գր. Նարեկացի – « Մատյան ողբերգության»
4. Խ. Աբովյան – « Վերք Հայաստանի»

79. Ո՞ր ստեղծագործությունն է Վ. Սարոյանը նմանեցրել տերունական աղոթքին.

1. « Խոսք իմ որդուն»
2. «Հայսատան ասելիս»
3. «Ես իմ անուշ Հայաստանի»
4. «Վահագն»

80. Համաշխարհային դեմքերից ո՞վ է նման միտք արտահայտել մեր լեզվի մասին.

« Ճոխ է հայոց լեզուն և առատորեն կվարձատրի ուսումնասիրողին»:

1. Ջ. Բայրոն
2. Վ. Հյուգո
3. Շելլի
4. Մ. Գորկի